

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 42/4**

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «Ճան Շին» ՍՊԸ-ի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

«Ճան Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերությունը) հայտնում է, որ պետական գրանցում է ստացել 2018 թվականի մայիսի 14-ին և 2018թ. հունիսի 4-ին ՀՎՍԿ թիվ 17 սպասարկման բաժին է ներկայացրել առցանց լիազոր գրանցելու դիմում, սակայն տեխնիկական պատճառներով հնարավոր չի եղել առցանց օգտվողի գաղտնաբառը և անունը ուղարկել դիմումում նշված էլեկտրոնային հասցեին: Այդ իսկ պատճառով հնարավոր չի եղել ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը: Քանի որ 2018թ. հունիսի 4-ը շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման վերջնաժամկետն էր, Ընկերությունը դիմել է ՀՀ ՊԵԿ «թեժ գիծ», որտեղ խորհուրդ են տվել դիմել տեխնիկական բաժին: 2018թ. հունիսի 4-ին Ընկերությունը նամակով դիմել է տեխնիկական բաժին, որտեղից պատասխանել են, որ առկա է տեխնիկական խնդիր:

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքը՝ Ընկերությունը խնդրում է տրամադրել հնարավորություն ներկայացնելու 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, քանի որ խնդիրը կապված է տեխնիկական պատճառների հետ և ընկերության կողմից կատարել են անհրաժեշտ բոլոր քայլերը:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

«Ճան Շին» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 14.05.2018թ.:

Ընկերությունը 04.06.2018թ-ին ՀՎՍԿ թիվ 17 սպասարկման բաժին է ներկայացրել առցանց լիազոր գրանցելու դիմում, սակայն տեխնիկական պատճառներով հնարավոր չի եղել առցանց օգտվողի գաղտնաբառը և անունը ուղարկել դիմումում նշված էլեկտրոնային հասցեին, այդ իսկ պատճառով հնարավոր չի եղել ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը: Առկա խնդրի վրաբերյալ բողոքաբերը հայտնել է ՀՀ ՊԵԿ «թեժ գիծ»:

### 3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն «Ճան Շին» ՍՊԸ-ն բավարարում է Օրենսգրքով նախատեսված բոլոր պահանջներին 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Քննարկվող դեպքում Ընկերությունը փորձել է սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, ինչը տեխնիկական խնդիրներով պայմանավորված (հնարավոր չի եղել առցանց օգտվողի գաղտնաբառը և անունը ուղարկել դիմումում նշված էլեկտրոնային հասցեին) չի հաջողվել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել «Ճան Շին» ՍՊԸ-ին ներկայացնելու հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Ճան Շին» ՍՊԸ-ի դիմում-բողոքը բավարարել:
2. «Ճան Շին» ՍՊԸ-ի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2018թ. համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ